

368.5

1 MAR 2010

ՀԻՆՏ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1933 թ. մայիսի 28-ի

ՎՈՐՈՇՈՒՄ

Մոսկվա - Կրեմլ № 1092

Պարտադիր կոպարային ապահովագրության կանոնների
հաստատման մասինՍ.Խ.Հ.Մ. Ժողովրդական Կոմիտեների Խորհուր-
դը ՎՈՐՈՇՈՒՄ է՝1. Ս.Խ.Հ.Մ. Ֆինտոդկոմատի կողմից ներկայա-
ցված պարտադիր կոպարային ապահովագրության կա-
նոնները հաստատել:2. Հանձնարարել Ս.Խ.Հ.Մ. Ֆինտոդկոմատին հա-
մաձայն այդ կանոնների յերեք որվա ժամկետում հա-
տանել հրահանգներ վնասները վերջերս և ապահո-
վագրական վարձատրությունը վճարելու կարգի մա-
սին ըստ առանձին տեսակի ապահովագրությունների:3. Հանձնարարել Ս.Խ.Հ.Մ. Ֆինտոդկոմատին,
դաշնակից Հանրապետությունների Ֆինտոդկոմատնե-
րին և նրանց տեղական որդաններին ուժեղացնել հսկո-
ղությունն ապահովագրական որդանների, նմանապես
չրջանային և դյուղական ապահովագրական հանձնա-
ժողովների աշխատանքների նկատմամբ:Ս.Խ.Հ.Մ. Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի
Նախագահ՝ Վ. ՄՈՒՆՏՈՎ (ՍԿՐԻՍԻՆ)Ս.Խ.Հ.Մ. Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի
Գործերի Կառավարիչ՝ Ի. ՄԻՐՈՇՆԵԿՈՎ

Պարտադիր Կոպարային ապահովագրության

Նպատակ ունենալով պետական կոպարային ապահովագրության գործը կարգավորելու, ապահովագրական միջոցները ճիշտ նպատակին ոգտադործելու և վերացնելու այն հնարավորությունները, վորոնք ուժանդակել են քողարկել ապահովագրության ակտերով անտեսաստեղծության և կուլակային տարրերի ուղղակի վնասարարությանը: Ս.Ն.Հ.Մ. Ֆինսոդկոմատը և ապահովագրական որգանները պարտավոր են ղեկավարվել պարտադիր կոպարային ապահովագրության հետվյալ կանոններով:

1. Ինչպիսի գույք և ապահովագրվում:

§ 1. Պարտադիր կոպարային ապահովագրությունը սարածվում և կուրտեստեղծյունների (գյուղատնտեսական կոմմունաներ, գյուղատնտեսական արտելներ և միատեղ հող մշակող ընկերություններ) գույքի վրա, կուրտեստեղծյունների գույքի վրա (տնտեսության չհանրայնացված մասը), աշխատավորական մենատնտեսությունների, բանվորների, ծառայողների, տնայնագործների, արհեստավորների և այլ աշխատավորների (նույն թվում ոտարահպատակ քաղաքացիների) գույքի վրա, ինչպես քաղաքներում, նույնպես, և գյուղական վայրերում:

§ 2. Կուրտեստեղծյունների (գյուղատնտեսական կոմունաներում, գյուղատնտեսական արտելներում և միատեղ հող մշակող ընկերություններում) ապահովագրվում են հետևյալ գույքերը՝

ա) շենքերը, ագյունարերական և գյուղատնտեսական ձեռնարկությունները (սարքավորման հետ), գյուղատնտեսական գույքը (ինվենտարը), մեքենաները, փոխադրական միջոցները, դաշտային և մարգագետնային արտադրանքը:

բ) գյուղատնտեսական անասունները (ծիյերն, ուղտերն, ավանակները, ջորիները, յեղջերուները, խոշոր յեղջուրավոր անասունները, վոչխարներն, այծերն և խոզերը):

գ) գյուղատնտեսական մշակույթների կուլտուրաները (դաշտային, բանջարանոցային, այգեգործական և այլն):

Կոպարային ապահովագրության պլանով կարող և նախատեսվել կուրտեստեղծյունների և այլ տեսակի գույքի ապահովագրություն:

§ 3. Կուրտեստեղծյունների մոտ (տնտեսության չհանրայնացված մասում) աշխատավորական մենատնտեսություններում, բանվորների, ծառայողների, տնայնագործների, արհեստավորների և այլ աշխատավորների (նույն թվում և ոտարահպատակ քաղաքացիների մոտ) ապահովագրվում են հետևյալ գույքերը՝

ա) շենքերը, տնայնագործական արհեստանոցները (սարքավորման հետ):

բ) գյուղատնտեսական անասունները (ծիյերն, ուղտերն, ավանակները, ջորիները, յեղջերուները, խոշոր յեղջուրավոր անասուններն և առանձին ազնվացեղ վոչխարները):

գ) գյուղատնտեսական մշակույթների կուլտուրաները (դաշտային, բանջարանոցային, այգեգործական և այլն):

2. Ինչպիսի գույք չի ապահովագրվում:

§ 4. Կուրտեստեղծյուններում, կուրտեստեղծյունների, մենատնտես գյուղացիների և այլ անձանց մոտ չեն ապահովագրվում հետևյալ գույքը՝

Ա. Շենքերը՝

ա) խաբիսուլ կամ քանդված շենքերը, վորոնք այդ իսկ սրատձառով չեն կարող իրենց նպատակին ծառայել:

բ) ժամանակավոր շենքերը, այսինքն մեկ տարուց
ավելի պահառ ժամանակի համար կառուցվածները.

դ) հողի մակարդակից ավելի բարձր պատեր չու-
նեցող բնակելի շենքեր (գետնավորեր).

դ) շենքեր, վորոնք իշխանության կարգադրու-
թյամբ յենթակա յեն քանդման.

յե) անբնակելի և այն ել վոչ վորի կողմից չ' պահ-
պանվող շենքեր (չը պահպանվող են համարվում այն-
պիսի շենքերը, վորոնց պահպանումը տիրոջ կողմից
տվյալ վայրի վոչ մի բնակչի չի հանձնարարված):
Տիրոջ կամ նրա ընտանիքի անդամների բացակայու-
թյան ժամանակ շենքի պահպանումն ուրիշին հանձնա-
րարելու մասին պետք և հայտնվի գյուղխորհրդին դրա-
վոր կարգով:

Ծանոթություն. — Անբնակելի շենքեր չեն հա-
մարվում կոյտնտեսությունների գյուղից դուրս
գտնվող (դաշտում, անտառում և այլն), և զանա-
զան տնտեսական կարիքների համար ոգտադործ-
վող շենքերը:

Բ. Ձեռն ապահովագրվում գյուղատնտեսական կեն-
դանիները, վորոնք չեն հասել ապահովագրման այն հա-
սակի, վորը սահմանվում է կոպարային ապահովագրու-
թյան վերաբերյալ վորոշումներով կենդանիների ա-
ռանձին տեսակների համար:

Գ. Ձեռն ապահովագրվում հետևյալ գյուղատնտե-
սական մշակույթները՝

ա) յենթաչերտային բույսերն առվույտ և այլն,
նրանց ցանված տարում.

բ) կանաչ պարարտացման համար ցանվող բույ-
սերը.

§ 5. Չի ապահովագրվում այն գույքը, վորը պատ-
կանում է՝ անհատական կարգով գյուղհարկ վճարող
կուլակային տնտեսություններին, № 3 ցուցակով յե-
կամտային հարկ վճարող վոչ աշխատավորական տնտե-
սություններն և ըստ իրենց սոցիալական դրության,

ծագման կամ նախկին գրագմունքների ընտրական իրա-
վունքներից զրկված անձանց:

3. Վար դեպքերում և Պետապը հատուցում ապահովա-
գրական վնասները.

§ 6. Ապահովագրված գույքի փչացման վնասը Պե-
տապը հատուցում է այն դեպքում միայն, յեթե գույքի
այդ վոչնչացումը տեղի յե ունեցել տարրերային աղետ-
ների և դժբախտ դեպքերի հետևանքով, անկախ գույ-
քատիրոջ կամ քից:

§ 7. Կոյտնտեսությունների (գյուղատնտեսական
կոմունաներ, գյուղատնտեսական արտելներ և միա-
տեղ հող մշակող ընկերություններ) շենքերի արդյունա-
բերական ձեռնարկությունների, գույքի (ինվենտա-
րի) փոխադրական միջոցների և այլ գույքի ապահո-
վագրման վերաբերյալ Պետապը հատուցում է այն
վնասները, վորոնք առաջացել են՝ հրդեհից, կայծակա-
հարույթյունից և չողեկաթսանների պայթումից (թե-
կուղ և կայծակահարույթյունն և պայթումը հրդեհ չա-
ռաջացեն) հեղեղումներից յերկրաշարժից, քամուց,
(մրրիկ), փոթորկից, սելավներից, փլուզումներից և
սողումներից:

§ 8. Կոյտնտեսականների շենքերի ապահովագրման
կարգով Պետապը հատուցում է այն վնասները, վորոնք
առաջացել են հրդեհից, կայծակահարույթյունից, (թե-
կուղ և կայծակը հրդեհ չառաջացնի), հեղեղումներից,
յերկրաշարժից, փլուզումներից, սողումներից:

§ 9. Մենատնտես տնտեսություններին պատկանող
շենքերի և տնայնագործական արհեստանոցների (սար-
քավորման հետ) ապահովագրման կարգով Պետապը
հատուցում է այն վնասները, վորոնք առաջ են յեկել
հրդեհից և կայծակահարույթյունից (թեկուղ և կայծա-
կը հրդեհ չառաջացներ):

§ 10. Պետապը հատուցում է նմանապես սու-
թած շենքերի ու այլ գույքի վնասները, վորոնք

առաջացել են տարրերային աղետների ժամանակ՝ հրդեհի, հեղեղումների և այլն, որիննակ՝ յեթե հրդեհը մարելու համար անհրաժեշտ է յեղել քանդել շենքն ու տանիքն և այլն:

§ 11. Գյուղատնտեսական անասունների ապահովագրման դժով Պետապը հատուցում է այն վնասները, վորոնք առաջացել են անասունների անկումից՝ հիվանդութունների, բնական մահվան և դժբախտ պատահարների (հրդեհի, կայծակահարուժյան, հեղեղումների և այլն) պատճառով, ինչպես և անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ անասուն մորթելուց՝ վարակիչ հիվանդություններ պարզելու կամ կանխելու համար:

Ծանոթութուն.— Յեթե կենդանին կտրել է վոտքը, կամ ստացել է այլ վնասվածք, ու անպետք է դարձել վորպես բանող ուժ կամ մթերատու, անասունը մորթվել է մսի համար, ինչպես նաև յեթե անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ մորթված անասունի միսը պիտանի յե ճանաչված, ապա ապահովագրական վարձատրություն չի վճարվում:

Յեթե կոլտնտեսություններում անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ կամ դժբախտ պատահարի հետևանքով մորթված է ցեղական անասուն կամ ազնվացած ցեղի անասուն, ապա Պետապը կոլտնտեսությանը վճարում է այն տարբերությունը, վորը ստացվում է կոնվենցիոն գներով հաշված մսի մթերքների արժեքի և այն գումարի միջև, վորի սահմաններում Պետապը իր վրա յե վերցրել պատասխանատվություն, յեթե միայն կոլտնտեսությունը կ'հաստատի, վոր նա մասմթերքները երեք այդ գներով վաճառել է, իսկ բոլոր մնացած դեպքերում, մսի արժեքը հաշվում է կոլտնտեսական շուկայի գներով:

§ 12. Գյուղատնտեսական մշակույթների ապահովագրման կարգով Պետապը հատուցում է վնասները՝ ա) կարկտահարումից, ինչպես և կարկտին ուղեկցող հեղեղումներից և փոթորիկներից.

բ) ցրտահարումից, թրջումներից, փոտմից և հեղեղումներից.

գ) յերաշտից.

դ) անբերրիությունից.

Բացի դրանից, կոլտնտեսություններում գյուղատնտեսական մշակույթների ապահովագրման կարգով Պետապը հատուցում է գյուղատնտեսական մշակույթների այն վնասները, վորոնք առաջացել են կրակից մինչև նրանց հնձելը:

§ 13. Պետապը լրիվ արժեքով հատուցում է կոլտնտեսությունների, ինչպես և կուլակության դեմ ախտիվ պայքար մղող կոլտնտեսականների և մենատնտեսների գույքի փչացման կամ վնասման դումարը այն դեպքում, յեթե գույքի փչացումը կամ վնասումը տեղի յե ունեցել դասակարգային վրեժխնդրության հողի վրա. այդ վերջին հանգամանքը պետք է հաստատված լինի շրջանային ապահովագրական հանձնաժողովի հատուկ վորոշմամբ, հիմնված գույքի փչացման կամ վնասման հետ կապված բոլոր հանգամանքների մանրազննին հետադրության վրա:

4. Վոր դեպքում Պետապը չի հատուցում վնասները.

§ 14. Պետապը չի հատուցում վնասները բոլոր այն դեպքերում, յերբ ապահովագրված գույքի փչացումը կամ վնասումը տեղի յե ունեցել ապահովագրվողի (կոլտնտեսության, կոլտնտեսականի և մենատնտեսների) մեղքով, այսինքն բացահայտ անտնտեսվարության, հանրային սեփականությունը պահպանելու բացակայության կամ ապահովագրվողի դիտավորյալ գործողությունների հետևանքով:

§ 15. Պետապը չի հատուցում ապահովագրված ա-

նասունի անկման վնասն այն գեպքերում, յերբ անասունի անկման պատճառը արդյ մեղքն է, այսինքն, յեթե այդ մահն առաջացել է, նրա սխալ գործողության և միջոցներ ձեռք չառնելու հետևանքով այն է՝

ա) յեթե անասունի անկման պատճառը այնպիսի հիվանդություն կամ դժբախտ պատահարն է, վորը առաջացել է բացահայտ անտեսեամբարության հետևանքով (անասունին անբավարար կերակրելու և այդ հողի վրա, առաջացած հյուսկամից, աղտոտած կեր տալուց, վատ թեյը, տեղական պայմաններին անհամապատասխան շենքում անասունին պահելը, հիվանդ անասունին վատ խնամելն, անասունի հիվանդության մասին անասնաբույժին կամ գյուղխորհրդին չ'հայտնելը և այլն)։

բ) յեթե անասունի անկումն առաջացել է նրա չափազանց շահագործման կամ վնասարարական վերաբերմունքից հետո, առաջ հետևանքով (անասունին ուժից վեր աշխատանքով ծանրաբեռնելն, անխնա ծեծելը, խիստ քշելը, վնասակար կեր տալը, տաքացած անասունին սառնոր ջուր խմացնելը և այլն)։

գ) յեթե անասնաբույժը կամ անասնաբույժակը կ'հայտնաբերի, վոր ընկած անասունը վարակված է յեղել վարակիչ հիվանդությունների գեմ պայքարելու վերաբերյալ պարտադիր վորոշումներ և անասնա-սանիտարական կանոններ անասնատիրոջ կողմից չ'կատարելու պատճառով։

§ 16. Պետապը չի հատուցում գյուղատնտեսական մշակույթների վնասները ցանքատերերին հետևյալ դեպքերում՝

ա) յեթե փչացած մշակույթը չի վերացանվել «նստած վոր այդ անհրաժեշտ է յեղել և ըստ տարվա ժամանակի հնարավոր։

բ) յեթե տնտեսությունը տուժած տարածության վրա չի շարունակի բույսի խնամքը և մշակման հետագա այն աշխատանքները (բեր լցնելը, քաղհանը, վնասատուներից պահպանելը և այլն), վորոնք սովորաբար

տարվում են այլ տնտեսությունների կողմից վնասի չափը նվազեցնելու համար։

գ) յեթե տարբերային աղետը տեղի չե ունեցել տարվա այն ժամանակ, յերբ տվյալ վայրի պայմաններով ապահովագրված մշակույթի բերքն արդեն պետք է հավաքված լիներ։

դ) յեթե տուժած տարածության վրա, մինչև լուծարքային ահա կազմելը, տնտեսությունը անասուն և արածացրել, հնձել է խոտի, կանաչ կերի կամ սիլոսի համար, կամ թույլ է տվել այլ գործողություններ, վորոնք պակասեցնում են տարբերային աղետից դեբ մնացած բերքի արժեքը։

Մանրություն. — Եթե այս կանոններով սահմանված (§ 41) ժամկետներում չըջանային հանձնաժողովը արձանագրությունը չի կազմել, ապա տնտեսությունը հայտնում է այդ մասին գյուղխորհրդին, վորից հետո իրավունք ունի վերացանք անելու, տուժած մշակույթը հավաքելու խոտի, կանաչ կերի կամ սիլոսի համար և այդ դեպքում նա չի գրկվում ապահովագրական վարձատրություն ստանալու իրավունքից։

§ 17. Պետապը չի հատուցում հրդեհված շենքերի գույքի (ինվենտարի) և այլ գույքի վնասները, յեթե վնասն առաջացել է տնտեսության կողմից հակահրդեհային կանոնները չ'պահպանելու հետևանքով (վառարանների և ծխնելույցների անկարգ պահելը, շինության կամ մարազի մոտ խարույկներ վառելը, հրդեհի տեսակետից վտանգավոր նյութերն անփույթ պահպանելը և այլն), ինչպես նաև յեթե հրդեհը առաջացել է ողի քաշելուց կամ կոպիտ անգգուշությամբ հետևանքով։

§ 18. Գույքի գողության կամ կորուստի, ինչպես և արտադրության մեջ դադարադուր տեղի ունենալու հետևանքով առաջացած վնասները, չեն հատուցվում։

§ 19. Բացի այդ, անկախ այն պատճառներից, վորոնց հետևանքով վոջնացել է ապահովագրված գույքը,

Պետապը չի հատուցում վնասներն այն դեպքում, յերբ գույքատերը՝

ա) քազգրել է ցուցակադրումից կոպարային ապահովագրման յենթակա գույքը:

բ) չի հայտնել սահմանված ժամկետում (տես § 31.) ապահովագրված գույքի փչացման կամ վնասման մասին:

գ) ահաբեկ հաստատվելու պահից 6 ամսվա ընթացքում պահանջ չի ներկայացրել Պետապի տեսչին ապահովագրական վարձատրություն ստանալու մասին:

5. Վոր ժամանակվանից է գույքը համարվում ապահովագրված և յերբ է ապահովագրությունը դադարեցվում:

§ 20. Կոպարային ապահովագրությանը յենթակա ամբողջ գույքը պետք է ցուցակադրվի: Ցուցակադրությունը կատարվում է տարին մեկ անգամ: Այն գույքը, վորը մտել է տնտեսության մեջ ցուցակադրությունից հետո, համարվում է ապահովագրված այն պահից, յերբ փաստորեն տնտեսության մեջ է մտել, իսկ կոլտնտեսություններում—գույքը գույքացուցակում գրանցելուց հետո:

§ 21. Կոլտնտեսություններում Պետապը կրակից և այլ տարրերային աղետներից վնասները հատուցում է շենքերի կառուցման սկզբից (շենքերի կից գտնվող շինարարական նյութերի հետ միասին): Իսկ կոլտնտեսականների և մենատնտես տնտեսություններում, Պետապի պատասխանատվությունը սկսվում է շենքի պատերն և տանիքը կառուցելուց հետո միայն:

§ 22. Կոլտնտեսությունների ձեռնարկություններին սարքավորման, գյուղատնտեսական գույքի (ինվենտարի), մեքենաների և փոխադրական միջոցների վերաբերյալ, Պետապի պատասխանատվությունն սկսվում է այն պահից, յերբ նրանք անցել են տնտեսության մեջ և գրանցվել են կոլտնտեսության գույքացուցակում:

§ 23. Կոլտնտեսությունների հացահատիկը, ծգնո-

ւոր, անասնակերը և դաշտային ու մարգագետնային տարածքները կրակից և մյուս տարրերային աղետներից ապահովագրման գծով Պետապի պատասխանատվությունը սկսվում է հացահատիկը և կերախոտերը հնձելուց հետո:

§ 24. Գյուղատնտեսական մշակույթները կարկտից, թրջվելուց, ցրտահարումից, յերաշտից և անբերրիությունից ապահովագրելու գծով Պետապի պատասխանատվությունը սկսվում է՝

ա) ցանովի (դաշտային և բանջարանոցային) մշակույթների և կարտոֆիլի նկատմամբ—ծլելու որից:

բ) տնկվող մշակույթների (ծխախոտի, կաղամբի և այլն) նկատմամբ, տնկելու պահից:

գ) այգիների, մրգարանների նկատմամբ—ծաղկելու (ծաղկի բողբոջներ դոյանալու, իսկ խաղողի այգիներին նկատմամբ ծաղկելու պահից с момента выбрасывания метелки (соцветов)

§ 25. Գյուղատնտեսական անասուններն անկումից ապահովագրելու գծով Պետապի պատասխանատվությունը սկսվում է այն պահից, յերբ անասունները հասել են ապահովագրման այն հասակին, վորը սահմանվում է կոպարային ապահովագրության վերաբերյալ յուրաքանչյուր տարի հրատարակվող վորոշումներով:

§ 26. Կրակից և այլ տարրերային աղետներից ապահովագրված շենքերի ապահովագրությունը դադարեցվում է շենքը քանդելու պահից:

Կարկտահարությունից, փտումից, ցրտահարությունից և այլ տարրերային աղետներից ապահովագրված գյուղատնտեսական մշակույթների ցանքերի ապահովագրությունը դադարեցվում է բերքը հավաքելու պահից, այսինքն խոտը հնձելուց, ցանքը հավաքելուց այգիներում, պարտեզներում և այլն, պտուղները քաղելուց հետո:

§ 27. Ապահովագրությունը վերացվում է նաև այն դեպքերում, յերբ ապահովագրական հսկողության կար-

գով կ'հայտնաբերվի և չըջանային ապահովագրական հանձնաժողովի հատուկ վորոշմամբ կ'հաստատվի, վոր ապահովագրված գույքի նկատմամբ բացահայտ անտնտեսափարկան կամ վնասարար վերաբերմունք է ցույց տրված յեղև կոլտնտեսություններում կամ կոլտնտեսականի մոտ (չ'հանրայնացված մասի վերաբերյալ) կամ մենատնտեսություններում:

Ապտեսուչները պարտավոր են պարբերաբար ստուգել ապահովագրված գույքի դրությունը՝ նրա ապահովագրության, պահպանման և դեպի նա տնտեսափարկան վերաբերմունք ունենալուն:

Նման ստուգումներ տեսչի կողմից պետք է կատարվեն ինչպես անձամբ, նույնպես և գյուղական ու կոլտնտեսական հասարակայնության միջոցով:

Կոլտնտեսության կամ մյուս տնտեսությունների կողմից հրդեհային պաշտպանության, ինչպես և ուրիշ ապրերաչին աղետները կանխելու և այդ աղետների դեմ պաշարելու վերաբերյալ պարտադիր վորոշումները չ'կատարելու դեպքում, կամ ապահովագրված գույքը վտանգող անտնտեսափարություն հայտնաբերելու դեպքում, ապահովագրական տեսուչները պարտավոր են տնմիջապես և զրավոր կերպով մասնացույց անելու գույքատիրոջը նկատմամբ թերությունները և սուղարկել նրան վերացնել այդպիսիները կամ թափանակամիջոցում, զգուշացնելով, վոր հակառակ դեպքում ապահովագրությունը կ'դադարեցվի:

Ապահովագրական տեսուչը կոլտնտեսություններում տնմիջապես հրավիրում է կոլտնտեսականների ընդհանուր ժողով, վորտեղ հայտարարում է նկատված բացերի մասին: Յեթե չ'նայած դուշադրումներին, թերությունները և վտանգը չ'են վերացվի, ապա ապահովագրական տեսուչը պարտավոր է չըջանային ապահովագրական հանձնաժողովի առաջ հարց գնել ապահովագրությունը դադարեցնելու մինչև տնտեսության կարգի բերելը:

Ապահովագրումը դադարեցնելու մասին կոլտնտե-

սությանը և մյուս տնտեսություններին պետք է հայտնել զրավոր:

Ապահովագրումը դադարեցնելու մասին չըջանային ապահովագրական հանձնաժողովը անպայման հայտնում է ի գիտություն տվյալ կոլտնտեսության անդամներին կամ մենատնտեսների ընդհանուր ժողովին:

Ապահովագրությունը կարող է նորից վերականգնեցնել նույն չըջանային ապահովագրական հանձնաժողովը կամ Պետապի հանրապետական մարմինն այն դեպքում միայն, յերբ կապացուցվի, վոր ապահովագրությունը դադարեցնելու պատճառները վերացվել են:

Ապահովագրական տեսուչները պարտավոր են հայտնաբերված անտնտեսափարության և վնասարարության մասին հայտնել տեղական մարմիններին, հանցավորներին քրեական պատասխանատվության յենթարկելու համար:

6. Ապահովագրված գույքի տիրոջ պարտականությունները:

§ 28. Ապահովագրված գույքի տերերը (կոլտնտեսությունները, կոլտնտեսականները, մենատնտեսները և մյուս աշխատավորները) պարտավոր են պահպանել գույքը և ցանքը կարգին և ազրոնմիական, հակահրդեհային և սնտանաբուժական կանոնների համաձայն, և հային և տնտնաբուժական կանոնները չ'ըզերհանալ իրենցից կախված բոլոր միջոցները հրդեհակային կանխելու անասունները վարակումից ապահովելու համար և այլն:

§ 29. Ապահովագրված գույքի տերը պարտավոր է մոչ միայն փրկելու գույքն, այլ և ձեռք առնելու բոլոր անհրաժեշտ միջոցները, վորպեսզի մասնակի կերպով վնասված գույքն ավելի ևս չ'փչանա կամ քանդվի և այլն և ողնելու Պետապի մարմիններին, գյուղական կամ չըջանային ապահովագրական հանձնաժողովին վորոշելու միասի այն չափը, վորն իրկապես տեղի յն ունեցել

տարրերային աղետի հետևանքով, վորի համար գույքատերը պարտավոր է՝

ա) հրդեհի, հեղեղումների կամ տարրերային աղետի դեպքում, ապահովել գույքի վնասների պահպանությունը կողոպտումից.

բ) թրջումների կամ ցրտահարությունից դեպքում, թույլ չտալ գերծ մնացած ցանքի վրա անասունները արածացնելը կամ արորելը, իսկ մասնակի անբերրիությունից դեպքում, և յեթե մշակույթի մնացած մասի լրացուցիչ մշակմամբ (բզերը լցնելը, քախանելը, վնասատուներից պաշտպանել և այլն) հնարավոր է փրկել, ապա կազմակերպել այդ մշակումը ժամանակին և կանոնավոր:

գ) հիվանդություն կամ դժբախտ պատահարի հետևանքով անասունը ընկնելու դեպքում, պահել դիակը կամ նրա մնացորդները և ներկայացնել այն գյուղական կամ շրջանային հանձնաժողովին, վորին կ'հանձնարարվի այդ առթիվ ակտ կազմել:

Ծանոթութուն.— 1. Յեթե անասնաբուծի կամ անասնաբուծակի կամ ել գյուղխորհրդի ներկայացուցչի կողմից բացահայտ հատկանիշների հիման վրա, կ'հայտնաբերվի, վոր անասունն ընկել է վարակիչ հիվանդությունից, անասունի տերը վոչ միայն կարող է, այլ և պարտավոր է ժամանակին դիակը վերցնել վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու վերաբերյալ գործող պարտադիր վորոշումների համաձայն, տեղական իշխանություն (գյուղխորհրդի, շրջգործկոմի և այլ) ներկայացուցչի ներկայությամբ, իսկ յեթե հնարավոր չեն նրանց ներկայությունը—յերկուս վիճանների ներկայությամբ:

Ծանոթութուն.— 2. Յեթե գյուղական կամ շրջանային հանձնաժողովը ակտ կազմելու համար սահմանված ժամկետին չի յեկել, ապա անասունի դիակը, գործող պարտադիր վորոշումների համաձայն, առանց սպասելու հանձնաժողովի գալուն,

բայց տեղական իշխանությունից ներկայացուցչի ներկայությամբ, հանձնվում է ճարպեղեն վերամշակող գործարանին կամ թաղվում է:

§ 30. Տվյալ տնտեսությունից մեջ ապահովագրված գույքը տարրերային աղետից կամ դժբախտ պատահարի փչանալու, կամ վնասվելու մասին, գույքատերը պարտավոր է ըստ հնարավորությունից շուտ, առանց վորեն ձգձգումների, հայտնելու գյուղխորհրդին կամ Պետապի շրջանային տեսչին այն հաշվով, վորպեսզի հնարավոր լինի ժամանակին և ճիշտ վորոշել տնտեսության կրած վնասի չափը:

Վորպես կանոն, այդ հայտարարությունը պետք է անել դրավոր ձեւով և պարզորոշ մատնանշելով թե (ճիշտ), յերբ, վոր տնտեսությունից մեջ և ինչ տեսակի տարրերային աղետ է տեղի ունեցել, վորքան և ինչ գույք է վնասվել տարրերային աղետից ու վնասների մոտավոր չափը:

Վորպեսզի կարելի լինի ժամանակին և ճիշտ վորոշել տարրերային աղետից տնտեսությունը հասած վնասի չափն, ապահովագրված գույքի փչացման կամ վնասման մասի դրավոր հայտարարություններ կոլտնտեսականները և մենատնտեսները պետք է տան գյուղխորհրդին, իսկ կոլտնտեսությունները՝ գյուղխորհրդին և Պետապի շրջանային տեսչին, համենայն դեպս վոչ ուշ, քան՝

ա) անասունը ընկնելու պահից մեկ օրվա ընթացքում.

բ) հրդեհի, հեղեղումների և այլ աղետների օրից—յերկու օրվա ընթացքում.

գ) հինգ օրվա ընթացքում այն օրվանից, յերբ պարզվում է ցանքի վնասվածությունը կարկտից, ցրտահարումից յերաշտից և անբերրիությունից.

Ծանոթութուն.— Այս ժամկետներն անպայման պետք է պահպանվեն, յեթե չեն լինի վորեն խանգարող հատուկ պատճառներ, վորոնք կխանգարեն ժամանակին հայտնելու:

§ 31. Գույքատերերից հայտարարությունները

ստանալուց գյուղխորհուրդը պարտավոր է ստանալու հետևյալ որից վոչ ուշ, ուղարկել չրջանային ապահովագրական տեսչին:

§ 32. Տնտեսության մեջ իբր թե առաջացած վնասների մասին բացահայտ սուտ հայտեր ներկայացնելու համար, ապահովագրվողը յենթարկվում է քրեական պատասխանատվության:

7. Ապահովագրված գույքի փչացման և վնասման մասին. ով և ինչպես է կազմում ակտերը.

§ 33. Նայած թե ինչ չափերի յեն հասնում հրդեհի, տնասուռների անկման կամ այլ տարրերային աղետների հետևանքով առաջացած վնասներն, ակտերի կազմելը կատարվում է՝

ա) փոքր հրդեհներ տեղի ունենալու դեպքում, յեթե այրված դույրի արժեքը 150 ռ. ավելի չէ և տնասուռների յեզակի անկման դեպքում գյուղական հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1) գյուղխորհրդի նախագահը կամ նրա անդակալը — հանձնաժողովի նախագահ՝ 2) գյուղխորհրդի անդամ նշանակված գյուղխորհրդի կողմից և համաձայնացրված չրջանային Սնտեսչի հետ. 3) այն դեպքերում յերբ վնասը տեղի յե ունեցել կորստեստեսություններում կորստեստեսության վարչության նախագահը կամ հատկապես զրա համար լիազորված նրա անդամներից մեկը, 4) գյուղատնտեսը կամ անասնարուծը (անասնարուծակը) յեթե գյուղխորհրդում ալդպիսիք կան, 5) միլիցիոները, յեթե տվյալ գյուղում ալդպիսին կա: Վնասների լուծարքը գյուղական հանձնաժողովը կարող է կատարել իր անդամների վոչ պակաս քան 3-ի մասնակցությամբ:

բ) մնացած բոլոր դեպքերում, ալսինքն անասունների հաճախելի կամ մասաայական անկման, կարկտից կամ այլ տարրերային աղետներից ցանքերը փչանալու ու նման այլ դեպքերում, ակտը կազմում է չրջանային ապահովագրական հանձնաժողովը իր լրիվ կազմով կամ նրա հանձնարարությամբ չրջանային ապահովագրական

հանձնած ողովի մի քանի անդամները, ապահովագրական տեսչի պարտադիր մասնակցությամբ:

Հանձնաժողովը պարտադիր կարգով, նայած վնասների տեսակի, ալդ աշխատանքներին մասնակից է անում նաև գյուղատնտեսին կամ անասնարուծին:

§ 34. Չրջանային մշտական հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝ չրջործկոմի նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահ), չրջանային ապահովագրական տեսուչը, չրջհողրածնի վարիչը, պետական գյուղատնտեսական մթերումները կոմիտեյի չրջանային լիազորը, չրջանային միլիցիայի վարչության պետը և Մ.Պ.Ք.Վ. ներկայացուցիչը:

§ 35. Գյուղական կամ չրջանային հանձնաժողովի կազմած ակտի ճշտության համար պատասխանատու յեն ալդ հանձնաժողովի բոլոր անդամները, իսկ կեղծ ակտեր կազմելու կամ զրանց մեջ սուտ տեղեկություններ մտցնելու դեպքում — հանցավորները յենթարկվում են պատասխանատվության՝ համաձայն հանրային դույրը պաշտպանելու որենքի:

§ 36. Պետական ապահովագրության յերկրային, մարզային, հանրապետական և միութենական մարմինները (բնտ պատկանելու յն) պարտավոր են մասնակցել ները (բնտ պատկանելու յն) ակտերը կազմելուն: Հանձնալիմիտից բարձր վնասների ակտերը կազմելուն: Հանձնաժողովների նախագահները հանդիսանում են ալդ մարմինների ներկայացուցիչները:

§ 37. Ապահովագրված գույքի փչացման կամ վնասման ակտը կազմելուն անպայման պետք է մասնակցի ալդ գույքի տերը — կորստեստեսությունում — վարչության նախագահը կամ հատուկ լիազորված վարչության անդամն, իսկ կորստեստականների կամ մենատնտեսների տնտեսություններում. գույքատերը կամ նրա բնտանիքի անդամը:

§ 38. Ինչպես գյուղական հանձնաժողովների, նույնպես և չրջանային հանձնաժողովի ներկայացուցիչները համապատասխան ակտեր կազմելու համար պարտավոր են մեկնել հրդեհի, տնասուռների անկման կամ

տուժած ցանքի վայրը, վորպես կանոն վոչ ուշ, քան
գույքատիրոջից հայտարարությունը ստանալուց մեկ ո-
րից հետո: Մի քանի հայտարարություններ լինելու դեպ-
քում, առաջին հերթին հանձնաժողովը մեկնում է կոլ-
տնտեսությունները:

§ 39. Ապահովագրված գույքի փչացման կամ վնաս-
ման վերաբերյալ ակտեր կազմելու ժամանակ հանձնաժո-
ղովը պետք է անպայման ունենա իր ձեռքի տակ այս
կանոնները և տվյալ տեսակի ապահովագրության վնաս-
ները լուծարելու վերաբերյալ համապատասխան հրա-
հանգն ու այն դեպքում, յետե հանձնաժողովի անդամ-
ներից վորևէ մեկը անտեղյակ է դրան ապա մինչև աշ-
խատանքները, պետք է ընթերցել այդպիսին:

Հանձնաժողովը պետք է բոլոր հնարավոր միջոցնե-
րով (փչացած կամ վնասված գույքի տիրոջ հարցուփոր-
ձով, վկաների հարցուփորձով, հրդեհը, անասունի
գիսկը, տուժած ցանքի տարածությունը անմիջականո-
քեն դիտելով, փաստաթղթերը քննարկելով ու այլ նման
միջոցներով, պարզի գույքի փչանալու կամ վնասվելու
խտկական պատճառները, վորոշի վնասների չափը և
վնասների պատճառները պարզելուց հետո, (այս կա-
նոնների և ապահովագրական ամեն մի տվյալ տեսակի
վերաբերյալ հրահանգների համեմատ), վորոշում կա-
յացնի այն մասին՝ քե անհրաժեշտ է արդյոք տվյալ դեպ-
քում վնասի ապահովագրական վարձատրությամբ քե
պետք է մերժել:

§ 40. Յետե հանձնաժողովը կպարզի, վոր կոլտնտե-
սական գույքը փչացել է կամ վնասվել է դեպի այդ
գույքը ցուցաբերված բացահայտ անտնտեսավար կամ
վնասարար վերաբերմունքի հետևանքով, ապա նա
պարտավոր է վոչ միայն վորոշում կայացնել ապահո-
վագրական վարձատրություն չ' տալու մասին, այլ և
ամբողջ նյութը հանձնել քննչական մարմիններին հան-
ցավորներին պատասխանատվության յենթարկելու հա-
մար:

§ 41. Լուծարքային ակտը, այսինքն ապահովագր-
ված գույքի փչացման կամ վնասման վերաբերյալ ակտը
պետք է կազմել վոչ ուշ, քան հետևյալ ժամկետներին՝

ա) շենքերը, ինվենտարը և այլ գույքը կրակից կամ
այլ տարրերային աղետներից ապահովագրության վե-
րաբերյալ—վոչ ուշ, քան տուժած տնտեսությունից
ուարրերային աղետի մասին հայտարարությունը ստա-
նալու որից 7 օրվա ընթացքում:

բ) գյուղատնտեսական անասուններն անկումից՝
ապահովագրության վերաբերյալ վոչ ուշ, քան հայտա-
րարությունը ստանալու որից մեկ օրվա ընթացքում:

գ) գյուղատնտեսական մշակույթների ցանքը կարկ-
ալից, թրջումներից ցրտահարումից և անբերրիությու-
նից ապահովագրության վերաբերյալ— 5 օրվա ընթացք-
ում յետե հայտարարված է, վոր անհրաժեշտ է տուժած
մշակույթը վերացանելու, իսկ մնացած դեպքերում—այն
ժամկետներում, վոր կ' սահմանի չրջանային ապահո-
վագրական հանձնաժողովը կամ հանրապետական յերկ-
րային, մարզային ապահովագրական մարմինը, բայց
անպայման մինչև բերքի հավաքելը:

Ծանոթություն.— Լուծարքային ակտեր կազ-
մելու համար վորոշված վերջնական ժամկետները
կրկնապակվում են հյուսիսային յերկրում, Ուրալի
մարզում, Արևելյան Սիբիրի և Արևմտյան Սիբիրի
յերկրներում, հեռավոր Արևելքի Յերկրում, Բա-
րյաթ—Մոնղոլի, Յուբուրիյի, Կազակստանի, Կա-
րաքալպակայի և Կիրգիզիայի ԽՍՀ. Ուզբեկստանի
ԽՍՀ. Տաճիկստանի ԽՍՀ. և Թուրքմենստանի
Խ. Հանրապետություններում:

§ 42. Ակտը պետք է ստորագրված լինի գյուղական
կամ չրջանային հանձնաժողովի բոլոր անդամների կող-
մից:

8. Ակտերի ստուգման, հաստատման և վնասների հատուցման կարգը.

§ 43. Շրջանային ապահովագրական տեսուչը, գյուղական հանձնաժողովի արձանագրությունը ստանալուն պես, պարտավոր է՝

ա) ստուգել ամեն մի ակտի ճիշտ կազմած լինելու հանգամանքը և ակտերը, վորոնք կազմված են ճիշտ, ներկայացնել շրջանային ապահովագրական հանձնաժողովին, իսկ նրանք, վորոնք յենթակա յեն ուղղման հետ ուղարկել գյուղխորհրդին:

բ) անձամբ տեղը մեկնելու միջոցով, ստուգել բոլոր այն ակտերը, վորոնց ճիշտ կազմված լինելը կասկածելի յեն:

§ 44. Բոլոր վճարման յենթակա ակտերի հաստատումը, կամ վնասների մերժման նկատմամբ մորոշումը, կատարում է շրջանային ապահովագրական հանձնաժողովը շրջանային ապահովագրական տեսչի ղեկուցման հիման վրա: Լիմիտներից բարձր վնասները հաստատվում են Պետապի Մարզային, Յերկրային, հանրապետական կամ Միութենական մարմինների կողմից, ըստ պատկանելության:

§ 45. Շրջանային ապահովագրական տեսուչը, շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշման հետ համաձայն չ' լինելու դեպքում, պարտավոր է լողորձարկել նաև դադարեցնել վնասների վճարումը:

§ 46. Շրջանային ապահովագրական հանձնաժողովին (իսկ լիմիտներից բարձր վնասների նկատմամբ համապատասխան ապահովագրական մարմինները) ակտերը քննարկում և հաստատում է մեկ ղեկադրի ընթացքում, ակտը ստանալու պահից հաշված:

§ 47. Ակտը հաստատվելուց հետո, վնասների մճարումը պետք է կատարել հետևյալ ժամկետում՝

ա) կոլտնտեսություններին— 5 օրից վոչ ուշ:

բ) կոլտնտեսականներին— 10 օրից վոչ ուշ:

գ) մենատնտեսներին— 15 օրից վոչ ուշ:

§ 48. Ապահովագրական մարմինները պատասխանատու յեն տուժած անտեսություններին օրենքով հասանելիք ապահովագրական վարձատրությունը ժամանակին ու լրիվ վճարմանը և սույն կոպարային ապահովագրական կանոնները կիրառելիս թույլ չտալու բյուրոկրատական աղավաղումների:

Տեղի Ֆինանսական մարմինների ղեկավարները պարտավոր են սխտեմատիկորեն ստուգել ապահովագրական մարմինների, նմանապես և շրջանային ու գյուղական ապահովագրական հանձնաժողովների աշխատանքները:

9. Բողոքներ

§ 49. Գյուղխորհրդի և պետական ապահովագրական գյուղական հանձնաժողովների սխալ գործողությունների դեմ դրավոր ձևով դանդառներ տրվում են շրջանային ապահովագրական հանձնաժողովներին, իսկ շրջանային ապահովագրական տեսչության և շրջանային ապահովագրական հանձնաժողովների գործողությունների դեմ հանրապետական, յերկրային և մարազային ապահովագրական մարմիններին, ըստ պատկանելության:

§ 50. Ամեն մի ստացված դանդառ պետք է քննարկվի և լուծվի վոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, ստանալու պահից հաշված:

Շրջանային Ֆինանսական բաժինների ղեկավարները հսկում են ներկայացված բողոքների հիշված ժամկետներում քննարկման ու կատարման վրա:

Ս. Խ. Հ. Մ. Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

Ս. Խ. Հ. Մ. Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի Գործերի Կառավարիչ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ



ՀՀ Ազգային գրադարան



NL0215968

44.217

368

v-11